Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ) ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՓՈՐՁԱԳԵՏ) ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Ծրագրով նախատեսված աշխատանքների համառոտ նկարագիրը.**

Փորձագետը կատարելու է աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1) իրականացնել համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ ուսումնասիրություններ,

2) ապահովել Հանձնաժողովի կողմից համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների քննության շրջանակներում վարքագծի սկզբունքների, վարքագծի կանոնների վերլուծությունը և մեկնաբանումը, վարույթային որոշումների կազմմանը մասնակցությունը,

3) իրականացնել վարքագծի կանոնների վերաբերյալ դատական նախադեպերի ուսումնասիրություն, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) համապատասխան ակտերի, Վճռաբեկ դատարանի վերաբերելի որոշումների առնչությամբ,

4) վարքագծի կանոնների մեկնաբանման շրջանակներում իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն, ներկայացնել դրանց տեղայնացման առաջարկություններ,

5) մշակել վարքագծի կանոնների միասնական համակարգին առնչվող օրենսդրական փոփոխությունների, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների, Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի հետագա վերանայման, լավարկման առաջարկներ,

6) ներկայացնել Հայաստանի Հանրապետության գնահատման վարկանիշային և պարտավորությունների կատարման զեկույցների շրջանակներում վարքագծի կանոնների միասնական համակարգին վերաբերելի հանձնարարականների կատարմանն ուղղված առաջարկություններ,

7) Հանձնաժողովի նիստում ներկայացնել վարքագծի կանոնների խախտումների դեպքերի վերաբերյալ համապատասխան ուսումնասիրությունների արդյունքները,

8) կազմել և ներկայացնել դիրքորոշում վարքագծի կանոնների, այդ թվում՝ ոլորտային կանոնագրքերի վերաբերյալ Հանձնաժողով ներկայացվող նախագծերի վերաբերյալ,

9) իրականացնել վարչության գործառույթներից բխող այլ աշխատանքներ, մասնավորապես՝ անհամատեղելիության պահանջների, շահերի բախման, այլ սահմանափակումների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների վերաբերյալ ուսումնասիրություններ,

10) իրականացնել օրենսդրական բացերի վերհանում և փոփոխությունների առաջարկի ներկայացում,

11) մասնակցել Վարչության կողմից իրականացվող այլ գործառույթների կատարմանը:

2. Փորձագետ ներգրավելու ժամկետը. մինչև մեկ տարի:

Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 322.816 (երեք հարյուր քսաներկու հազար ութ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ:

3. Փորձագետի պարտականությունները.

1) բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները,

2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները,

3) պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5) պահպանել անձնական տվյալների պաշտպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի պահանջները,

6) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Փորձագետին ներկայացվող պահանջները.

1) բարձրագույն իրավաբանական կրթություն,

2) իրավական ակտերի մշակման, փորձաքննության կամ վերլուծության ոլորտում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

3) անգլերեն լեզվի իմացություն,

4) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ հմտություններ,

5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

5. Դիմումների ընդունման վերջնաժամկետը. 2024 թվականի հուլիսի 11-ը ներառյալ:

6. Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15:

7. Չի թույլատրվում պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն,

- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

9. Դիմողի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով **(դիմումի ձևը կցվում է),**
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր),
- աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթեր),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենները բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար 3Х4 սմ չափի,
- անձնագիր կամ նույնականացման քարտ,
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք,
- ինքնակենսագրական,
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(հայտարարության ձևը կցվում է)**:

10. Փաստաթղթերը ընդունվում են էլեկտրոնային եղանակով՝ Հանձնաժողովի **hr.cpcarmenia@gmail.com** էլեկտրոնային փոստի միջոցով:

ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել 012-77-77-24 հեռախոսահամարով: